629
Li II.4

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 128

3 ՅՈՒՆՈՒԱՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ԹԱՒԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ՔԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Յունուար	4	† Կիր.	դկ.	Զկնի ուրբաթից Մնդեան
	5	Բշ.	ամ.	Ճրագալոյց Յայտնութեան:
	6	† Դշ.	ակ.	Տօն Յայտնութեան եւ Մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
	7	† Դշ.	բմ.	Բ. or Յայտ. եւ Մկր. Մոլոց.
	8	Եշ.	բկ.	Գ. » » »
	9	Ուրբ.	գմ.	Դ. » » »
	10	Շբ.	գկ.	Ե. » » »

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Զորրորդ տարի ✠ 3 Յունուար 1914 ✠ Թիւ 128

«Սրբազան Բանանայպեան Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար ուսմունքը մը կատարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն ուրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Համակ Կարդ. Մէրի տէլ Վալի, առ Անեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ

23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 թուականատառ:

ԴԷՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԱՄԱՆՈՐ

«Կաթողիկէ Արձագանգ» կը փութայ իր պատուական ընթերցողներուն շնորհաւորել նորածագ Տարին, և ի բոլոր սրտէ կը մաղթէ որ անիկա ըլլայ անոնց ամենուն համար երջանկութեան վարդակարմիր արշալոյս, այն երջանկութեան ու խաղաղութեան՝ զոր մեր աստուածային Փրկիչն Յիսուս Քրիստոս բերաւ յաշխարհ, երկնաւոր պարգև՝ Իր Ամանորոյ։

Մանուկներու ու պատանիներու համար, որոնք՝ դեռ նոր բացուած ծաղիկներու նման անփորձ և անպիտակ ամենաքանդ մրրիկներու և հետախաղաղ հեղեղներու, փորձութեանց ու չարչարանաց, իրենց կենսունակ հոգւոյն թարմ և մարգարտացող բաժակները բացած են բարերար շողերու, խոստմնալից զեփիւռներու փայփայումին, թո՛ղ այս Ամանորն ըլլայ ճաճանչաւորեալ հորիզոն Յուսոյ եւ շնորհարեր ճառագայթում երկնաւոր սիրոյ Ջերմութեան, որ բնաւ չնուազի իրենց կեանքի պայքարին յարափոփոխ փուլերուն մէջ։

Երիտասարդաց և հասուն արանց համար, որոնք արդէն՝ ռազմիկ ու քաջամարտիկ, նետուած են ոգորումի ասպարէզին մէջ, այս Ամանորն ըլլա՛յ թող երկնից զօրավիգին եւ օգնականութեանը առհաւատչեայ դրաւական, որպէս զի հաւատոյ զրահով պատած, անսասան հանդիսանան նահատակ ճշմարտութեան, պարտքի, բարի օրինակի, աստուածասիրութեան եւ յարատեւութեան. և սմենայն

բարեաց թշնամին առաթուր կոխելով, արժանանան անթառամ պսակի։

Իսկ անոնց համար, որոնք՝ կա՛մ արդիւնաւոր կեանքի մը նախանձելի և վարձընկալ պտուղներով բեռնաւորած, կա՛մ Աստուծոյ հայրագորով անդիշաչարութեամբը՝ մետասաներորդ ժամուն կոչուած մշակներ, կուրծքը բաղխող յա՛ր արտասուող մահացեալ խոնարհ ապաշխարողներ,— յամենայն դէպս՝ այս տագնապալից, փշալից, խաբէական և վաղանց կեանքի հոգերէն ու տուայտանքէն խնջած ու վաստակաբեկ, հայրենեաց կարօտով աղեկէզ պանդուխտ նժդեհներու նման մայրամուտ հորիզոններու ահեղ փառքերուն աչքերնին անքթիթ սեւեռած՝ հուսկ ողջոյնը պատրաստուած են տալ տակաւին անէացող ստորին աշխարհիս, սաւառնելու համար ա-նանց երջանկութեան յեթերն անսահման, այսպիսիներուն համար ալ այս Ամանորս թող ըլլայ նորափետուր արծիւի նման նորոգութիւն հոգեւորն կենաց, նախաճաշակ անվերջ քաղցրութեան յօթեւանս արդարոց. վերջին մայրամուտին, իրենց հոգին՝ երբ սիրով ուռճացած եւ եւս ճառագայթարձակ, թողու այս ցուրտ ու խաւարամած աշխարհը, իրենց հոգին անսահման հառաչ մ'ըլլայ դէպի ծոց երջանիկ ովկէանին անմահութեան։

Կը թաւալին կ'անցնին օրեր ու տարիներ և կը քշեն կը տանին դարերն ու ազգերը։ Մվ խեղճ մարդկութիւն, որ կը կարծէ հաստատուն բնակութիւն ունենալ այս ցաւոց անապատին մէջ. և կը հեծէ, կը ծիւրի, կը տառապի անդադար՝ ստուերին ետեւէն... և կը մաքառի նաեւ նախախնամութեան դէմ. կ'ապստամբի իր Աստուծմէն ու Փրկիչէն, և՝ Տէր մի՛ արասցէ, այս ցաւոտ ու կարճ կեանքը կը փոխանակէ անվերջ ցաւերով, անմար կրակով...։

Աշխարհ ի չարին կայ... Ամէն օր աւելի յառաջ կ'երթայ աշխարհ չարիքի մէջ. միշտ նոր առուգութեամբ, միշտ մեծագոյն և աճեցուն յանդգնութեամբ կը հալածէ կըրոնքը, բարին, առաքինութիւնը. մոլութիւնք կ'ողողին կարծես երկրագունդը՝ ուսկից կը փափաքին վտարել Ամենակէտ, Ամենակալ Տէրը։ Դժոխք կարծես աւելի քան երբեք կը փրփրայ։ Երգուընցած փաղանգներու հոծ եւ կուռ մեքենայութիւն մը, ահագնագղորդ յարձակումներ Ճշմարտութեան մարտկոցին դէմ... Գազանին և իր աղետաբեր դրոշմը կրողներուն դժոխային գրոհը... Բայց, փա՛ռք Բարերարին, անառիկ է այդ Մարտկոցը, անսասան այդ Ժայռը, որու վրայ կանգնած է Որդին Աստուծոյ իր Ս. Եկեղեցին։ Այս նաւը, միշտ ալեկոծեալ, յարաձուփ և մրրկաբախ, աներկեւան է սակայն և իր վրան ունի անմոլար և անվեհեր Ուղեցոյցը, որ անվրդով կը մատնանշէ խաղաղութեան նաւահանգիստը։

Վատիկանու Ծերունին, տիեզերական անսրխալ Վարդապետն Պիոս Ժ., Քրիստոսի Փոխանորդն, միակ Պահապանն է ճշմարտութեան և բարոյականի. հետեւաբար՝ առաքինութեան և երջանկութեան. հետեւաբար՝ ընտանիքի և մարդկային ընկերութեան. հետեւաբար՝ ճշմարիտ քաղաքակրթութեան և փրկութեան։ Առանց Անոր՝ կործանում է համայնակուլ։ Ա՛ն միայն պիտի՝ Ջաիջախէ համայնագաւ դժոխաշունչ ընկերութիւնը, որմնադիր աղանդին վիշապային գլուխը և գլուխները. և պիտի ազատէ զաշխարհ։

Փա՛ռք Անոր, յարգա՛նք և հնազանդութիւն Անոր. անբաժան միութիւն և հպատակութիւն Անոր։

Օրե՛ր ու տարիներ, դարե՛ր ու մշտնջենիներ, կեցցէ՛ յաւէտ Ս. Գահն անսասան...։

*
* *

1913 տարիով, որ սուզեցաւ յաւիտենականութեան ծոցին մէջ, Շաբաթաթերթս կը բոլորէ իր եռամեայ շրջանը։ Գոհունակութեամբ կը նկատենք այդ անուշն, բայց փըշալից ասպարէզը զոր կտրեցինք անցանք և որ սակայն զուրկ չեղաւ քաղցր մխիթարութիւններէ, առիթ մատակարարելով մեզ մեր բոլոր կորովովը պաշտպան կանգնելու Ճըշմարտութեան, ամբողջական Ճշմարտութեան Կաթողիկէ Ս. Կրօնիս, ամէն գնով և ի հեճուկս ամէն նախատանաց և հալածանաց. և ի փոխարէն գնահատումով խրախուսուելով

բարեացակամ ազնիւ ընթերցողներէ, հոս և դաւառներու և նոյն իսկ արտասահմանի մէջ։ Մեր խորին շնորհակալութիւնները կը մատուցանենք ամէն այն պատուական անձանց որոնք հաճեցան անդադար զմեզ քաջալերել, չարունակ իրենց հաճութիւնը մեզ յայտնել, գրով կամ բանիւ բերանոյ։ Աստուծոյ խօսքը պարարտ արտի մէջ ցանուելով, հարիւրապատիկ պիտի պտղաբերէ։

Ուստի Կ. Արձագանգը այսքան ընդհանուր համակրութեան նշաններով սրտապընդուած, զուարթ և խրոխտ, աննկուն անկախ և աննուաճ, կը թեւակոխէ իր չորրորդ տարուան շրջանին, անվեհեր ջատագով Կաթողիկէ Ս. Կրօնից և իրաւանց Առաքելական Ս. Աթոռոյ. որու վրայ բաղմած է Գէորգիանոս և Հոգեշունչ Սրբասէր Մերուն Վատիկանու Պիոս Ժ. Ս. Քահանայապետը։ Նա իր հայրական գութն, օրհնութիւնն ու խրախոյսը անպակաս կ'ընձեռէ մեզ և մեր ընթերցողներուն։ Սրտագին որդիական աղօթքով կը հայցենք ի Քրիստոսէ որ հաճի այսքան դժուարին և աղետալի ժամանակներու մէջ մխիթարել իր Փոխանորդը, կազդուրել և զօրացնել զայն, և պահել պահպանել անսասան, անփորձ և բարեբաստիկ։

Մեր ծրագիրը, որ մեր ազնիւ ընթերցողաց բացայայտ հաճութեան արժանացաւ, պիտի պահենք անայլայլ. և այս շրջանին մէջ ալ պիտի աշխատինք մերոլսանն, որպէս զի կարենանք զիրենք միշտ գոհացնել, միշտ մատչելի եւ օգտակար ընել մեր թերթը, նորանոր զանազանութիւններով ու գրաւիչ նիւթերով։ Վստահ ենք որ իրենք ալ պիտի սատարեն մեր ճիգերուն, մանաւանդ դաւառի կաթողիկէ կեանքին ու անցուդարձերուն վրայօք հակիրճ, բազմակողմանի եւ չահագրգիռ ծանօթութիւններ ղրկելով մեզ, զորոնք, երբ այս պայմանները լրացուցած ըլլան, յիրաւի մեծաւ գոհունակութեամբ սրտի պիտի հրատարակենք։

*
* *

1913 տարին փակեցինք՝ խաղաղութեամբ, փա՛ռք բարերարին. Վերջին երկու տարիները տհաւոր տարիներ եղան. մանաւանդ մօտաւոր արեւելքի համար։ Կը յիշեմ թէ Տօն Պոսկոյ, հրաշագործ ու որբակեաց հիմնադիր Սալէզեանց, որ անուանի է նաեւ իր կանխագուշակութիւններովը, մարգարէացած է եղեր որ 1912-13 տարիները մեծամեծ պատերազմներ եւ սոսկալի արիւնհեղութիւններ եւն. պիտի ըլլան. սա ճիշդ եղաւ. բայց նա աւելցուցեր է նաեւ շատ բարի գուշակութիւններ 1914 տարիին համար։ Կը յուսանք ու կը մաղթենք որ իր մարգարէութեան սա կէտն ալ միեւնոյն ճշգրտութեամբ կատարուի։

Քաղաքական խորհրդածութիւնները մեր բրօկրամէն դուրս ըլլալուն, բնականաբար անոր տարեկան ամփոփոյքն ալ զմեզ պիտի չի զբաղեցնէ։ Ապա թէ ոչ շատ բաներ պիտի ունենայինք, եւ չա՛տ օգտակարապէս, ըսելու՝ մեր հայ եղբարց գործած ձախաւեր մեծամեծ սխալներուն նկատմամբ.— անքաւելի միամտութեամբ գնացին անոնց միանալու նաեւ Կաթողիկէ Հասարակութեան իբր թէ ներկայացուցիչները։ Սակայն չխորհուեցաւ որ խնդրոյն մէջ կային անշուշտ Առաջնորդք կոյրք... անհեռատես, մտախաբ, դատաստանազուրկ, կարճամիտ... Ատոնք անխելք պնդումներով՝ առանց օգտի, առանց պատշաճութեան, առանց կատարեալ օրինականութեան, ազգասիրութիւն մը չողացուցին, —շրջմոլիկ հո՛ւր գերեզմանայ — որ ազգաստեաց չանթ մը կրնար դառնալ, Տէ՛ր մի ապրասցէ. Թագաւոր մանուկ, դժբա՛խտ բան... բայց մենք մեզի չենք ներեր քաղաքականութեամբ զբաղիլը։

Սակայն ի՞նչ չըսենք, ի՞նչպէս լռենք, երբ Էջմ.այ այս անխոհեմութիւնը՝ անոր ակելի չարութեամբ ևս միանալով, ձգտի և յանդգնի խուժել եւ գրոհ տալ նաեւ մեր դաշտին մէջ. Կաթողիկէութեան շրջափակին մէջ ևս... ամէն բան միանգամայն կործանելու համար, հաւատք, կրօնք, Ս. Աթոռ, եկեղեցականութիւն, բարոյք, ընտանիք. քաղաքակրթութիւն ու երջանկութիւն. այս ամէնը կը նշանակէ, այս ամէնուն միա՛կ պաշտպանն ու երաշխաւորն է Կաթողիկեութիւնը։ Ուստի ուզեցին ատոնք կործանել այս ամէնը։ Կը կործանեն ատոնք՝ առանց չինե-

լու։ Ի՞նչ բարիք ուրեմն կարելի է երբեք յուսալ այս տեսակ մարդոցմէ։ Ո՛րքան պատշաճապէս ըսաւ քանի մը օր առաջ հանրածանօթ թուրք գրող՝ Ալի Բէյմալ պէյ, իր թերթին՝ Բէյամի 37 թիւին խմբագրականին մէջ, երբ կ'աւարտէր. «Եէրինեէ նէ՛ զոյացնազլարընը պիլմէսէն՝ մէվնուսի երգանլարտան հիչ պիր իգլիմսէ, հիչ պիր իոսէ, հիչ պիր զէման, հիչ պիր Ֆահսէ պէրիենիլմէզ»։

Արդ, այս անիրաւ շահատակութեանց միայն երկուքը կ'ուզենք մատնանիշ ընել և անցնիլ։

Առաջինն է, ատոնց անխիղճ ջանքը՝ ջնջելու Հայ-Կաթողիկէ բարբիկուբիւնը, իբր աշխարհային իշխանութիւն։ Փուչ է ան՝ իրենց աչքին։ Ինչ որ Կաթողիկէ է, կ'ատեն, չար ոգւոյ ատելութեամբ։ Ի սկզբանէ անտի ատեցին զմեզ. և սուտ սիրողներ կը ձեւանան, կործանելու կամ խածատելու համար։ Տղաքը որսալու ձեւն ալ կը գործածեն, պաճուճազարդ պուպրիկներ ձօնելով, Ամանորոյ կաղանդչէք!

Համազգային միութիւն! կը գոչեն բարձրաբարբառ. ազգիս յարանուանութիւնները ի մի ձուլել՝ աշխարհային-վարչական, եւ նոր յառաջատութեամբ՝ եկեղեցա-վարչական տեսակէտով։ Զուտ կրօնականը պիտի բաժնեն եղեր... վա՛յ ձեզ կեղծաւորաց։ Մենք լիօրէն խօսեցանք ասոր վրայ մեր 120 թիւին մէջ «Համազգային միաբանութիւն» տիտղոսով. էջ 711։

Համազգային միութիւն! Ի՞նչ անուշ, ի՞նչ գեղահնչիւն, ի՞նչ ոսկեդրուագ մարգարտայեռ զոհարափայլ բառ... բայց՝ 1. Խոշոր սուտ մըն է՝ իր բոլոր խոստումներով. 2. Անմտութիւն մըն է՝ իր բոլոր անիրականալի պարագաներով. 3. Անիրաւութիւն եւ թշնամութիւն մըն է՝ եղածը կործանելու անհրաժեշտ ձգտումով. 4. Վայրապար ատելութեան սերմնացանութիւն մըն է՝ խորապէս անքաղաքագէտ և սնահեռատես։ Կարճ ըլլանք, այսչափս շատ իսկ է։ Ահա՛ Բողոքականները, միացեր էին... աղմկալից չոհնդով. ի՞նչ ըրին ցարդ... Ոչինչ։ Զարմանալի բան. դեռ հիմա շրջաբերականներ կը գրեն գաւառները, համոզելու համար բողոքականները — որոնք բողոքած էին — այս միութեան օգուտներուն վրայ. ծիծաղելո՞ւ կամ լալո՞ւ երեւոյթ։ Եւ գիտե՞ք, ի՞նչ ոճերով, որպիսի՛ համեստ ջատագովականով, ի՞նչ տեսակ խոնարհամիտ հրաւիրանօք ու վեհերոտ կոչերով, ո՛րքան վերապահութիւններով եւ յապաւումներով՝ ըլլալիք համաձայնութեան մասին, ո՛րչափ սահմանափակումներով. — կարծես այս զահավէժ գործին համար անագան ստրջանք մը կը բուրէ այդ գրուածքէն. մարդ կ'ապշի կը մնայ բացագանչելով. «Ա՜սո՞ր յանգեցաւ ուրեմն այս որոտընդոստ միութիւնը!»։

Եւ կը յանդգնին իրենց անմիտ թերթերով դեռ հրաւիրել զկաթողիկեայս, որ՝ անմտաբարէն իրենց միանալու համար՝ անգթօրէն կործանեն իրենց Պատրիարքարանը.

Կա՛լ զիս հրաժարեալ՝ ապաքէ՛ն։

Երկրորդը՝ նոյնքան կործանարար ճիգ. Կաթողիկէութեան հանդէպ։ Այս մարդիկ այս արուեստը կ'ուզեն կատարելագործութեան տանիլ, կարծես անբաւական կու գայ իրենց կործանարար դերը՝ ազգին մէջ, կրօնքի մէջ, իրենց եկեղեցւոյն մէջ, բարոյականի մէջ, ևն., կ'աշխատին սողսկելու նաև Կաթողիկէութեան մէջ։ «Ոսոխն ձեր սատանայ... շրջի եւ խնդրէ թէ զո՞ կլանիցէ»։

Մեր վերջին երկու տարուան ցաւալի, անարդարանալի և միշտ ողբալի երկպառակութեան, զոր յանիրաւի ստեղծեցին, մշակեցին եւ զայրացուցին, ինքնահաւան, անհնազանդ, հպարտ կամ ըմբոստաբար անտարբեր եւ մինչեւ իսկ քանի մը անկրօն միտքեր, այդ երկպառակութեան՝ կ'ըսենք, դժոխային, փքոցուռոյց հրահրիչներ եղան էջմիածնականները իրենց քանդասէր կուսակցութիւններով, իրենց թերթերով, իրենց եկեղեցականութեամբ, պաշտօնապէս իրենց Պատրիարքարանով, իրենց ժողովներով։ Ո՜վ վատութեանս. եւ ոչ իսկ Ցոյներէն խրատ և օրինակ կրցան առնուլ՝ եկեղեցական իշխանութիւնը ճանչնալու, յարգելու, գո՛նէ գոնէ չնախատելու.— չի կրցան օրինակ առնուլ Դեսպանատուններէ եւ նոյն իսկ թագաւոր-

ներէ ու կայսրներէ, որոնք Կաթողիկոսը, եւ Կեղեցական Պատրիարքը ճանչցան ու պատուեցին իրենց նամակներով։— չկրցան օրինակ առնուլ նոյն իսկ պաշտօնական ընող օսմ. կառավարութենէն որ Կաթողիկոսը իբրեւ պես հոգեւոր միշտ ճանչցաւ, եւ՝ պաշտօնական նամակներով. և յետոյ ուրեմն եղած պաշտօնանկութեան ալ ապօրինի եղած ըլլալը կը խոստովանի։ Ահա ուրեմն էջմիածնականք, հայ եղբարք, ագռաւներու պէս կռկռալով թափեցան մեր վրայ, դիւական ծիծաղով. ծիծաղեցան զմեզ, նշաւակ ըրին, խայտառակեցին զմեզ, իրենց եկեղեցականութիւնը միացաւ ըմբոստ աշխարհականաց հետ եւ փարիսական քամահրանօք ոտնհար եղաւ մեր եկեղեցական իշխանութեան. «Վա՛յ քեզ Քորազին, վա՛յ քեզ Բեթսայիդա, վինչեւ ի..,»—«Լացէ՛ք ի վերայ անձանց եւ ի վերայ որդւոց ձերոց... զի եթէ ընդ փայտ դալար զայդ առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի»։

Եւ հիմա որ լսեցին թէ համաձայնութեան մը յոյսի շողեր կը ցայտեն ամպերու մէջէն, վրդովեցան, իրար անցան, խռովեցաւ Հերովդէս եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա, հրէական ատեցող ճեռը, Փրկչին ատեցող։ Եւ սկսան նոր լուտանքներ, նախատինքներ, հայհոյանքներ, որոնց բովքն ու աղբիւրը անսպառ է իրենց քով, տեղայնել հայ կաթողիկեայց հասցէին, ատոնք՝ մեր հայ եղբա՛ր՝ (!?)։ Մարդ կը գանի կարգալով իրենց թերթերուն վատ ատելութիւնը և թոյնը, լի բացարձակ և դիտուած ու կամեցեալ սուտերով. ամ՛ոթ նախատանաց։ Եւ դեռ աւելին կայ. սկսան գրգռել հակառակորդ կողմը. հրաւէր կարդալ անոնց, գովեստներով յերկինս ամբառնալ Սամաթիոյ անխիղճ և վատ դասալիքները, որոնք «Առ ի մեզ ելին, այլ ոչ էին ի մեզ. զի եթէ ի մեզ էին, ապա առ մեզ մնային, այլ զի յայտնի լինիցին եթէ ոչ էին ամենեքին նոքա ի մեզ» (Ա. Յովհ. Բ. 18)։ Սկսան իրենց թերթերով ու կրօնականներով գրգռել մեր հակառակորդ կողմը, պէսպէս դիտումնաւոր սայրաբանութիւններով եւ ընդունայնախօսութիւններով, գրգռել՝ որպէս զի համաձայնութեան չգան, չհնազանդին Գերագոյն Պետին, Կաթողիկէ չմնան ու Կաթողիկէութիւնը կործանի. — Կործանի՞... Դրուցք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն. Կաթողիկէութիւնը Հայէն կախում չունի. իսկ Հայ Կաթողիկէութիւնը Էջմիածնական Հայէն կախում չունի. բարին ու ճշմարիտը ատեցողը, վերջապէս անոր յաղթանակին առջեւ գետնամած՝ իր ձեռքը պիտի խածաւէ կատաղութեամբ...

Այսչափ՝ Ամանորոյ առթիւ։

Տէրը խմաստութիւն տայ, նախ ինձի՝ ապա ամէնուն. գոնէ վերջապէս 1914է սկսած...

ԱՌ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՏԷՐ
ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ Ժ Է. ԹԷՐՋԵԱՆ

Կ. ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Պիրեմիր, 14 Դեկ. 1913

Գերերջանիկ Տէր

Մեծ յարգանքով ստացայ ձեր ինձի ուղղած՝ Նոյեմբ. 13 թուակիր շնորհագիծ շրջաբերականը և Զմմառու միաբանութեան նորահաստատ սահմանադրութեանց նուիրական կանոնագիրքը։

Զմմառեան միաբանութեան Սահմանադրութեանց կամ կանոններու հաստատումը կը ուսնուի Կիլիկիոյ նուիրապետութեան ամէն կողմը անանկարագրելի խանդավառութեամբ. իսկապէս ասիկայ Զմմառի միաբանութեան գոյութեան ուսնն է։ Հայ Կաթողիկէ հասարակութիւնը այս պատմական դարագլուխին մէջէն՝ սոյն միաբանութեան համար կը նշմարէ փառքի և վերականգնումի նոր հորիզոն մը, յառաջադիմութեան և բարգաւաճման ճամբուն վրայ, ուր դարերով մաքառեցաւ՝ իւր գոյութիւնը, իւր սրբակրօն հիմնադիրներուն տուած ուղղութիւնը՝ հաւատարմօրէն պահելու համար. և այս գոյութեան պահպանման նպատակին հասաւ երեք ճանապարհով։ Նախ՝ հետեւելով միշտ իւր հիմնադիրներուն առաքելական հոգւոյն եւ ուղղութեանը. որով մարդկային կիրքեր չը

ներէ ու կայսրներէ, որոնք Կաթողիկոսը, եւ Կեղեցական Պատրիարքը ճանչցան ու պատուեցին իրենց նամակներով։— չկրցան օրինակ առնուլ նոյն իսկ պաշտօնական ընող օսմ. կառավարութենէն որ Կաթողիկոսը իբրեւ պես հոգեւոր միշտ ճանչցաւ, եւ՝ պաշտօնական նամակներով. և յետոյ ուրեմն եղած պաշտօնանկութեան ալ ապօրինի եղած ըլլալը կը խոստովանի։ Ահա ուրեմն էջմիածնականք, հայ եղբարք, ագռաւներու պէս կռկռալով թափեցան մեր վրայ, դիւական ծիծաղով. ծիծաղեցան զմեզ, նշաւակ ըրին, խայտառակեցին զմեզ, իրենց եկեղեցականութիւնը միացաւ ըմբոստ աշխարհականաց հետ եւ փարիսական քամահրանօք ոտնհար եղաւ մեր եկեղեցական իշխանութեան. «Վա՛յ քեզ Քորազին, վա՛յ քեզ Բեթսայիդա, վինչեւ ի..,»—«Լացէ՛ք ի վերայ անձանց եւ ի վերայ որդւոց ձերոց... զի եթէ ընդ փայտ դալար զայդ առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի»։

Եւ հիմա որ լսեցին թէ համաձայնութեան մը յոյսի շողեր կը ցայտեն ամպերու մէջէն, վրդովեցան, իրար անցան, խռովեցաւ Հերովդէս եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա, հրէական ատեցող ճեռը, Փրկչին ատեցող։ Եւ սկսան նոր լուտանքներ, նախատինքներ, հայհոյանքներ, որոնց բովքն ու աղբիւրը անսպառ է իրենց քով, տեղայնել հայ կաթողիկեայց հասցէին, ատոնք՝ մեր հայ եղբա՛ր՝ (!?)։ Մարդ կը գանի կարգալով իրենց թերթերուն վատ ատելութիւնը և թոյնը, լի բացարձակ և դիտուած ու կամեցեալ սուտերով. ամ՛ոթ նախատանաց։ Եւ դեռ աւելին կայ. սկսան գրգռել հակառակորդ կողմը. հրաւէր կարդալ անոնց, գովեստներով յերկինս ամբառնալ Սամաթիոյ անխիղճ և վատ դասալիքները, որոնք «Առ ի մեզ ելին, այլ ոչ էին ի մեզ. զի եթէ ի մեզ էին, ապա առ մեզ մնային, այլ զի յայտնի լինիցին եթէ ոչ էին ամենեքին նոքա ի մեզ» (Ա. Յովհ. Բ. 18)։ Սկսան իրենց թերթերով ու կրօնականներով գրգռել մեր հակառակորդ կողմը, պէսպէս դիտումնաւոր սայրաբանութիւններով եւ ընդունայնախօսութիւններով, գրգռել՝ որպէս զի համաձայ-

կարողացան զինք հետեւած ուղղութենէն չեղեցնել եւ իջեցնել այն բարձունքէն ուր ելացած էր իր նախնեաց երկնապիշ միտքը։

Երկրորդ՝ սկզբէն ի վեր կատարեալ հնազանդութիւն ունենալով առ Ս. Գահն Հռովմայ. ի վայրի դալարուոջ Առաքելական վարդապետութեան անդ բնակեցաւ, եւ առ ջուրս հանգստեան հրահանգաց Սրբազան Քահանայապետացն մնաւ. որով արմատ ձգեց, ճիւղեր ընձիւղեց, ծաղկեցաւ, եւ պտուղ տուաւ. զի այս անսխալ համոզումը միշտ կար իւր անդամոց մտքին մէջ թէ ամէն միաբանութիւն որ սերտիւ միացած չէր Հռոմայ Գահին հետ, անկարող եղաւ իւր գոյութիւնը պահել. զի ամենայն ուր որ չէ պատուաստեալ յորքն յայն ցամաքի. Որ հաստատեալ է յիս, նա բերէ պտուղ յոյժ, եւ որ ոչ է հաստատեալ յիս, ել նա արտաքս իբրեւ զուռ եւ ցամաքեցաւ։

Իսկ երրորդ՝ զի այս Միաբանութիւնը անկեղծ սիրով եւ հլու հպատակութեամբ անմեկին յարած մնաց Կիլիկիոյ Աստուածապահ Աթոռոյն, որով մեծ դիրք մը գրաւեց Կիլիկիոյ նուիրապետութեան մէջ. եւ այսպէս հոգեւոյս Պատրիարքներու երկնառաք ներշնչումով հիմնարկուած հոխացուցուած եւ կառավարուած այս Միաբանութիւնը, առաքինութեանց հանդիսարան եղաւ եւ է միշտ։

Այս ամէնուն իրբեւ հաւաստիք ահա այս վերջին օրերս Սրբազան Քահանայապետն Հռոմայ, Փոխանորդն Քրիստոսի, գնահատելով անոր արդիւնքը եւ լրում տալով փափագին Միաբանիներուս, անոր անցեալին մասին իւր բարձր համոզումը յայտնելէն յետոյ, կու գայ՝ անոր ներկան եւ ապագան եւս նուիրագործելու, իր անսխալ բերնովը կը հրատարակէ զայն Եկեղեցւոյ օգտակար Միաբանութիւն մը. կը տարածէ անոր վրայ իւր հովանաւորութեան դրօշը, կ'օժտէ զայն նոր սահմանադրութիւններով՝ ներշնչուած իր գերագոյն իմաստութենէն, եւ առանձին խնամքով կը յանձնէ անոր կառավարութեան ղեկը քաջ Նաւապետիդ ձեռքը, յանձնարարելով որ հասցնէք զայն անսայթաք, անդորր եւ տանոյ ալեաց նաւահանգիստը։

Այս բերկրաբերթ պատեհութեամբ ես եւս իբրեւ տուսալը Զմմառու Միաբանիներուն, կ'ողջունեմ նոյն Միաբանութեան վերականգնումն այս արշալոյսը։ Կը խնդակցիմ ձեզի, Գերերջանիկ Տէր, իբրեւ գերապանծ Գլխուն այս Միաբանութեան, հրաւիրելով ձեր երկնառաք օրհնութիւնը մեր ամէնուս վրայ, եւ կը մաղթեմ իմ սիրելի միաբանութեանս թուական մը վերականգնումի, սրտաբուղիչ շրջան մը ինքնամփոփումի եւ ինքնագիտակցութեան՝ միաբանութեան բոլոր խաւերուն մէջ՝ նոր եռանդով եւ նոր կորովով յառաջանալու համար այնքան արդիւնաւորապէս սկսուած փրկաւէտ գործը։

Դարձեալ կը մաղթեմ որ այսուհետեւ ամէն Միաբան ոգւով չափ փարի իրեն ցոյց տրուած այս նոր ուղղութեան, որով թէ՝ Առաքելական Գահուն եւ թէ՝ Գերերջ. Տեառնդ եւ թէ՝ համօրէն կաթողիկէ նուիրապետութեան ակնկալած փրկաւէտ արդիւնքը պիտի իրականանայ. նաեւ իրենց յաւիտենական հանգստեան մէջէն պիտի խայտան մեր առաքելական հիմնադիրներուն աճիւնացեալ սուրբ ոսկրոտիքը, ակաղձուն եւ պղալից տեսնելով իրենց ձեռաստունկը։...

ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ԱՃԵՄԵԱՆ

ՀԻԱՍՆԻ ԻՆԹԻԽԱՊ

«Սէվիլի Անաթոլրոն,

«Եէտի եաչընը իքմալ իթմիշ օլան Արման օղլունը աշխարհականլար թարաֆընան իտարէ օլունան պիր մէքթէպէ գօմաղա զէվճէնիզէ պէրապէր գարար վէրմիշ օլտուղընըզը պանա իշար իտիյօրսըն։

«Մէքթուպըն ատէթա գանըմը գուրութը։

«Օղլունըն, պիր շրմէնտրֆէր վակօնլարընըն արասընտա գալարագ էզիլմիշ օլտուղընը պանա եազմըշ օլայոլն, շիւպհէսիզ, պունան զիյատէ միւթէէսսիր օլամազտըմ...։

«Զիւնքի հիւքիւմէթին շրմէնտրֆէրլէրի ճիսմէրը մահվ իտիյօրլար, հալ պու քի, աշ-

խարհական մէքթէպլէրի իսէ ճիսմէրէ սօ-գունմագսըզըն ճանլարը թախրիպ էյլէյօր-լար !

«Պու բէք սէհղէթլի տիր !

«Ազիզիմ. Ֆրանսասաքի բէսէրլէրին բէք չօղլարը կիպի սէնին սէ էյի պիր սասամ օլ-սուղընը պիլիրիմ։ Հէմ տէ չօճուղը օ մէք-թէպէ գօմագլըզըն պիր գանաթ նէթիճէսի օլմայուպ, մէնֆաաթ նէթիճէսի օլսըզընա տա վագրֆըմ։

«Նէ սէյէճէյինի պիլիրիմ.— Նէ եարայրմ, մէնֆաաթրմ պէօյլէ իճապ իթթիրիյօր։ Ար-ման պու կիւն պիր գաթօլիք մէքթէպէ կի-տէճէք օլուրսա, մէքթէպտէն չըգտըզընտա քէնտիսի իչուն հէր տիւրլիւ իսթիգպալ գա-բուլարընը մէտուր պուլաճագ. հալ պու քի Հիւքիւմէթ մէքթէպլէրինտէն չըգանըն ա-թիսի սայքի թահթը թէմինտէ տիր։ Իչթէ պու սէպէպէ մէպնի տէ պէն օղլումը Հիւ-քիւմէթ մէքթէպինէ գօմագ մէճպուրիյէթին-տէ պուլունուեօրըմ...։

«Բէք էյի, անլաշըլըը, ազիզիմ։ Միւ-սատտէ իտէրսէն միւթալէալարընա ճէվապ վերէյիմ։ Էվվէլ էմրիտէ սէն մէնֆաաթընը եանլըշ հիսապ-իթմիշսին։

«Պէլքի հիւքիւմէթ մէմուրիյէթլերի խու-սուսընտա իսթիգպալ գաբուլարը օղլունըն գարշըսընտա գաբալը պուլընաճագտըրլար... Ահ, նէ կիւգել պէտպախթըզ ! պիլմիշ օլ քի պու սուրէթլէ Արմանըն մէմուրիյէթ պէյա-սընտան գուրթուլմուշ օլաճագ տըր, պունա տա սէվինմէքլիյին իգթիզա իտէր։

«Միսթագիլ պիր մէքթէպտէն նէշէթ ի-տէճէք օլուրսա, հէր հանկի մէսլէքին տօղ-րու օլուրսա օլսուն, քէնտի գարշըսընտա կէնիշ եօլլար աչըլմըշ կէօրէճէք տիր. թիճա-ըէթ, սանաաթ, զիրաաթ տէնիլէն մէսլէք-լէր, հէմ տէ չէրէֆլի մէսլէքլէր մալիւմաթը միւքթէսէպէնին ըէնկինէ պագմագսըզընը, ասհապընա արզը իհթիյաճ իտէրլէր։ Համտ օլսուն, տահա Ֆրանսատա նամուսը քիմսէ-լէր իչուն իշ վար տըր։

«Շունը տա իլավէ իտէրիմ քի.

«Սէն պիր այիլէ բէսէրի օլսուղընտան, սէնին հագըգի, ճիտտի, վէ պիզզաթ նէֆսի-նէ այիտ մէնֆաաթըն, էվվատընը պիր գա-թօլիք մէքթէպինէ գօմագլըզընտա տըր։

«Սէն օղլընըն իսթիգպալընը տիւշիւնիւ-յօրսըն, հագգըն տա վար տըր։ Ֆագաթ եա-լընըզ ինըն էլտէ իտէպիլէճէյի մէմուրիյէթի տիւշիւնմէք քիֆայէթ իթմէզ. օ մէմուրիյէ-թի հիւսնի իյֆա իթմէք եօլընը տա օնա էօյրէթմէք լազըմ տըր։

«Արման օղլըն երիմի եաշայըպ տա պիր չաբգըն օլաճագ օլուրսա, նէ՞ եաբաճագ-սըն։

«Զիւնքի օղլընը պիր աշխարհական մէք-թէպինէ գօյան պապա քէնտի քէնտիսինէ պու սիւալի իթմէլի վէ օնա կէօրէ տէ տիւ-շիւնմէլի տիր...։

«Իշթէ էվվատընը, Ալլահ, ճէննէթ վէ ճէհէննէմ թանրմաեան մուալլիմլէր էլինէ թէսլիմ իտէճէքսին։

«Մնա, ախրէթտէ վագը օլաճագ նէ՞ մրա-քեաֆաթտան վէ նէ տէ միճազաթտան պահս իտէճէքտիրլէր։ Սէնլինքի կիպի, մի-նէթ, մէշագգաթ ու զահմէթ իչինտէ կէշէն պիր էօմիւր, էօմիւր տէյիլ տիր տէյէ էօյրէտէ-ճէք տիրլէր...։

«Մնա Ալլահըն թէնպիհլէրինի թալիմ իթ-մէյէճէքտիրլէր, «Պէն սէնին Ալլահըն վէ է-ֆէնտիսիմ. պէնտէն զայրը Ալլահըն օլմասըն». քէզալիք «Անանա պապանա բիայէթ էյլէ քի եէր իւզիւնտէ չօղ եաշայասըն» տէմէյի տէ ունուտտաճագլար։

«Սէնլին պու կիւն, էվվատընըն օգուտու-ղընը արզու իթմէտիյին քիթապլարը եարըն օնուն էլինէ վէրէճէք տիրլէր վէ մասուն ճիկէր բարէն օ քիթապլարտան «էյի ամէլլէր եալընըզ ֆայիտէլի օլանլար տըրլար, ֆէնա ամէլլէր իսէ, զարարլը օլանլար տըրլար» եօ-լընտա մէպտալար թասնի՛լ իտէճէք տիր։

«Արման զէքի տիր, ապլը տա աչըգ տըր. եարըն, պիր գաչ սէնէ սօնրա, շու օն պէշ եաշընտա կէլտիյի սըրալարտա քէնտինտէ ու-յանան գուվվէթի շէպապէթի վէ զէվգ ու սէֆա, մանզուզիյէթի նէֆսանիյէ արամագ սէվգի թէզահիւր իթտիյինտէ, իշթէ օ վա-գըթ, մէքթէպտէ էօյրէտտիքլէրինին թէսիրի կէօրիւլմէյէ պաշլայաճագ տըր, ալտըզը թա-

լիմին նէթիճէսի կէօրիւլէճէք տիր, եանի,

«Ալլահ եօգ տըր. չու հալաէ տիւնեատա խաթէտիյիմի եաբմագաան պէնի մէն իտէճէք քիմսէ տէ եօգ տըր։

«Ախրէթ վէ ախրէթ ճէզասը եօգ տըր. պիինա էն ալէյհ քէնտիմէ զօր էթմէյէ տէ հաճէթ եօգ տըր։

«Պաշգասընա զարարլը օլմատըգճա ֆէնաւ ըզ օլմազ, չու հալտէ պէն մահզուզիյէթիմի քէյֆիմի, էյլէնճէմի արայաճագ օլուրսամ հիչ պիր քիմսէյէ զարար եօգ տըր...։

«Էպէվէյնէ հիւրմէթ, պէպէքլէր իչուն, չօճուգլար իչուն էյի չէյ տիր...։ Պէն եաշտա պիր չօճուք արթըգ քինտի քէնտիսինի իտարէ իտէպիլիր...

«Պու սուրէթլէ օղլուն քէնտի բէնտիսինի զօր իթմէքտէն իսէ, սանա զօր իտէճէք տիր, սէնի թազիիգ էյլէյէճէք տիր։

«Օ վագրթ, ազիզիմ, աճի կէօզ եաշլարը սէօքէճէքսին։

«Էվվէթ, սէն տէ, պու կիւն եիրմի եաշընտաքի էվլատլարընըն Ալլահսըզ, գանունսըզ պիր հալէ կէլիպ, քէնտիլէրի ունուտարագ քէյֆլէրինին չէհէվաթը նէֆսանիյէթլէրինին արգասընտան տիւշմիւշ օլտուգլարընը կէօրէն նամուսլը վէ ճիտտի քրիսթիան պապալար կիպի գանլը եաշլար տէօքէճէքսին։

«Հալպու քի հատտը զաթընտա զապթը մյուշքիլ օլան կէնճլէր, մէզհէպին թէհիյէ էյլէտիյի գուվվէթլի վասիթալար. Ալլահ մէհապպէթի վէ ճէհէննէմ գօրգուսը կիպի տայիգալար սայէսինտէ կիւճ հալ իլէ վազիֆէ տայիրէսինտէ պուլունտըրլապիլիրլէր իքէն, սէն հէր տիւրլիւ գայտատան սէրպէսթ պրագրլիրլ օլան օղլունը, նա՞սըլ օլուպ տու, միւթի վէ միւնգատ թութապիլմէք ֆիքրինտէ պուլունուհօրսըն։»

«Պաղը քէրթէլէր վար տըր քի միւճիզաթ պէքլէմէմէք տահա խայրլը տըր...։»

(Մապատի վար)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

,,ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ'' ԳՐՔԷՆ

Գիրք Ա.—Գլ. ԺԷ. — Միանձնական կեանքի վրայ։

(Շար.)

Ծառայելու համար եկար, եւ ո՛չ կառավարելու. գիւղցի՛ր որ կոչուեցար վիշտ կրելու եւ աշխատելու, եւ ո՛չ թէ դատարկ կենալու կամ շաղփաղփելու։

Ուրեմն հո՛ս կը փորձուին մարդիկ, ինչպէս ոսկին բովերու մէջ։

Ո՛չ ոք կրնայ հոս տեւական մնալ, եթէ չուզէ ինքզինքը բոլորով ետին Աստուծոյ համար խոնարհեցնել։

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար.)

Արքունի պատուիրակը երբ Բիւթանիա հասաւ, Ոսկեբերան չուզեց իսկոյն Պոլիս դառնալ, այլ Մարմանա գիւղին մէջ կանգ առաւ. և խնդրեց որ նախ ժողովով իր անմեղութիւնը քննուի և հաստատուի։ Բայց որովհետեւ պատուիրակները հետզհետէ կ'աւելնային և ծովը նաւերով և նաւակներով կը ծածկուէր Ս. Հայրապետը քանի մը օր վերջը հարկադրուեցաւ Պոլիս անցնելու. սակայն երբ Անապլան ըսուած տեղը հասաւ դարձեալ կը սպասէր որ նախ եպիսկոպոսները վերջը արդարացնեն և. ապա եկեղեցին մտնէ։ Իսկ ժողովուրդը այս բանս իմանալով դարձեալ եպիսկոպոսաց դէմ գայրացաւ բորբոքեցաւ. և Ոսկեբերան՝ ստիպուեցաւ անյապաղ գալ եկեղեցին մտնել։ Այս միջոցին Ս. Հայրապետին հակառակորդները թաքնաթաքուր խոյս կու տային. Թէոփիլոս ամէնէն առաջ աճապարեց Ասիոյ կողմը անցաւ և հոն կ'ուզէր դատել իբրեւ ակայութեան՝ Հերակլիտոս եպիսկոպոսը. բայց երբ տեղ և արիւնոյի խռովութիւններ ծագեցան պղտեցուց և աղէքսանդրացւոց միջև. իրենցերուն հետ գաղտուկ ելաւ գնաց Եգիպտոս։

Իսկ Ոսկեբերան եկեղեցին մտնելուն պէս մի քանի մխիթարական խօսքեր ուղղեց ժողովուրդին, և երկրորդ օրը սքանչելի քարոզ մը խօսեցաւ որուն մէջ կը փայլին իր անսխալ և անայլայլելի առաքինութիւնները, իր ժողովուրդասիրութիւնը եւ համակամութիւնը։

Ոսկեբերանին գէմ եղած այս խռովութիւնները տեղի ունեցան 403ին, 404ին, իսկ աքսորը տեւեց օր մը միայն, որովհետեւ երկրորդ օրը ետ կանչուեցաւ, և երրորդ կամ չորրորդ օրը քաղաք մտաւ։ Ան ատեն վաթսունի չափ եպիսկոպոսներ ժողվեցան և քաջ հովուին անմեղութիւնը հաստատեցին, և Թէոփիլեանց ժողովակին բոլոր զրպարտութիւնները ի դերև հանեցին, և խաղաղութիւնը հաստատուեցաւ Թագաւորական քաղքին մէջ։

Բայց երկու տարի վերջը Եւդոքսիա Թագուհին

դարձեալ Ոսկեբերանին թշնամի դարձաւ։ Որով հետև երբ Ս. Հայրապետը խրատեց զինքը որ վերցնէ իր արձանը զոր կանգնած էր սիւնի մը վրայ Ս. Սոֆիայի դիմացի հրապարակին մէջ, ուր հեթանոսական խաղեր կը կատարուէին, թագուհին ըմբոստացաւ և սկսաւ անոր դէմ հաստնելու ջանալ։ Ոսկեբերան իր քարոզներուն մէջ, ըստ իր սովորական համարձակախօսութեան, ուժգնօրէն կը խօսէր մեծին ու փոքրին անկարգութիւններուն դէմ։ Իսկ Եւդոքսիա կը կարծէր թէ իրեն դէմ ուղղուած են անոր բոլոր խօսքերը։ Յունաց մէջ այն օրերէն Ոսկեբերանի անուամբ քարոզ մը կայ որ սապէս կը սկսի. Դարձեալ Հերոդիադա կը մոլեգնի, դարձեալ կը խռովի, դարձեալ կը կատաղի, դարձեալ Յովհաննու գլուխը պնակի վրայ առնուլ կը տենչայ։

Ս. Հայրապետին թշնամիները թագուհւոյն անոր դէմ դայրացած ըլլալը իմանալով փութով Թէոփիլոսի գրեցին որ կամ նորէն անձամբ գայ կամ իրեններէն քանի մը հոգի ղրկէ գարձեալ Ոսկեբերանը պաշտօնանկ ընելու համար. բայց անիկա վախէն չեկաւ այլ իր տեղը, երեք եպիսկոպոս ղրկեց։ Աստրիքէն, Պոնտոսէն, Փռիւգիայէն և Կապադովկիայէն եկան նաև ուրիշ առաջնորդներ զորոնք Արկադիոս ի նպաստ եւ Եւդոքսիա ընդդէմ Ոսկեբերանի կանչել կը կարծէին։ Եւ իրօք ալ եկողներուն մէջ խռովութիւն ծագեցաւ ոմանք Ոսկեբերանի հետ հաղորդուեցան իսկ ոմանք անկէ հեռու կեցան, և թագաւորն ալ հոս կեցուցին Մեծկեան օրը անոր եկեղեցին երթալէ։ Եւ ժողովք ընելով յայտարարեցին թէ անոր դարձը օրինաւոր կերպով չէ եղած և թագաւորին ձեռքով Ոսկեբերանին պատուիրակ ղրկեցին որ եկեղեցիէն ելլէ։

Այն ատեն Ոսկեբերան պատասխանեց ըստ Պալադիոսի. Ասուած ինծի յանձնեց այս եկեղեցին որ հոգ տանիմ ժողովրդեան փրկութեան, եւ չեմ կրնար զայն թողուլ. իսկ եթէ դուն այդպէս կ'ուզես, բռնութեամբ արտաքսէ՛ զիս. որովհետեւ քաղաքը քու իշխանութեանդ ներքեւ է. որպէսզի քու իշխանութիւնդ ամբաստիր ընէ զիս՝ պատշաճ ձգելուս համար։ Յետոյ պալատէն քանի մը հոգի եկան և զինքը եկեղեցիէն դգուշութեամբ առին տարին հայրապետանոցը և հոն թողին։

Իսկ զատկին ճրագալուցին օրը, երբ Ոսկեբերան կնքերին և ժողովրդեան թախանձանքին վրայ կ'ուզէր եկեղեցի մտնել. վրայ հասան արքունի զինուորներ. և ամբողջ քահանաներն ու հաւատացեալները զարկին ցրուեցին եկեղեցիէն, և իրիկուան դէմ երբ անոնք փախան ապաստանեցան ընդարձակ մկրտարանը, գիշերը զինուորները եկան և անկէ եւս վտարեցին զանոնք, զինուորները նոյնպէս հալածեցին զատկի օրը շատ նորակնունք հաւատացեալներ, որոնք քաղքէն դուրս սպիտակ հագած կը թափառէին։

Զարին արքունականներէն մէկը, գիւանապետ ձեւանալով, սուր մը ղգեստին տակը պահած կը պտտէր որպէս զի Ոսկեբերանը գտնէ սպաննէ, բայց բռնուեցաւ և քաղաքապետին առջև հանուեցաւ։ Ոսկեբերան այս բանս լսելուն պէս իր եպիսկոպոսներէն մէկը քաղաքապետին ղրկելով իր կեանքին դաւաճանը պատժապարտութենէ ազատեց։

Ոսկեբերանի կողմը եղողները գիշեր ցորեկ զգուշութեամբ կը պահպանէին հայրապետանոցը։

(Շարունակելի)

Մեկնութիւն Ս. Աւետարանի

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Փրկչին Ա. Ծնունդը

(Ղուկ. Բ. 1—7)

Բ

(Շար. եւ վերջ)

9. Բեթղեհէմի գոմին մէջ ծնանող և մսուրի վրայ հանգչող Փրկիչը մեզի համար գործեց Մարդեղութեան այս անհասանելի հրաշալիքը։ «Նա փոքրիկ, նա մանկիկ եղաւ, որպէս զի դու կարենաս ըլլալ այր կատարեալ։ Նա խանձարուրներով պատեցաւ. որպէս զի դու հացալից խնջոյքի սեղանին մօտենաս։ Նա յերկիր իջաւ, որպէս զի դու յերկինս բարձրանաս։ Նա չունէր տեղ մը իջեւանին մէջ, որպէս զի դու շատ օթեւաններ ունենաս յերկնաւորս։ Որ մինչ հարուստ էր, աղքատացաւ ձեզի համար, որպէս զի դուք անոր կարօտութեամբն փարթամանաք» (Ս. Ամբր.)։ «Ուստի անոր աղքատութիւնը իմ ստացուածս է, և Տիրոջս տկարութիւնը իմ զօրութիւն է։ Ուզեց ինքը կարօտանալ, որպէս զի այլոց ամենեցուն առատանայ։ Այն ճչող մանուկի լացքը իմ մեղքերս կը լուան. անոր արցունքները իմ յանցանքներս մաքրեցին։ Աւելի ուրեմն, Տէ՛ր Յիսուս, կը պարտիմ քու քաշածներուդ՝ որոնցմով փրկուած եմ, քան քու մեծագործութեանդ՝ որով ստեղծուած եմ» (Նոյնը)։

10. «Աստուած մարդ եղաւ, որպէս զի մարդս ըլլար Աստուած» (Ս. Անսելմ.)։ Զէ՞ինք կարող զԱստուած, սմենապարդ ողի ըլլալուն համար, ըմբռնել մարքով ու պաշտել ըստ պատշաճի՝ հոգւով և ճշմարտութեամբ. ուստի Աստուած զգեցաւ մեր մարմինը, որ-

պէս զի կարենանք զինքն ըմբռնել, նա՛ զի և աչօք տեսնել, ականջօք լսել, ձեռօք շօշափել. և անով վայելել, ինչպէս կ'ըսէ Ս. Կիւրեղ։ Ասոր համար է որ և Ս. Յովհ. Աւետարանիչ, Յիսուսի սիրելի աշակերտն եւ արծուեթռիչ աստուածաբանը, այսպէս կը սկսի իր Նամակը. «Այն որ ի սկզբանէ է, որուն լուրը լսեցինք, որուն ականատես ալ եղանք, որուն մեր աչքերովը նայեցանք, եւ մեր ձեռքերը օշոշափեցին կենաց Բանին վրայ, եւ կեանքը յայտնուեցաւ, ու տեսանք, ու կը վկայենք, ու կը պատմենք ձեզի յաւիտենական կեանքին վրայօք, որ Հօր քովն էր ու երեւցաւ մեզի, զոր տեսանք ու լսեցինք, կը պատմենք ձեզ, որպէս զի դուք ալ հաղորդութիւն ունենաք մեզի հետ» (Ա. Կաթող. Ա.)։ Աստուծոյ լոյսը Նորասքանչ փայլեցաւ մեր աչքերուն, որպէս զի տեսանելիօրէն ճանչնալով զԱստուած, անտեսանելեաց սիրոյն յափշտակութիւնք։ Քանզի մարմնացեալ Բանն՝ Յիսուս Քրիստոս, ուղղակի աւարկայ է երկրպագութեան, սիրոյ ու երախտագիտութեան և պաղատանաց. «Եւ արդ ընկա՛լ զաղաչանս մեր, սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեա՛ց մեզ։ Զի դու միայն սուրբ, դո՛ւ միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր, Յիսուս Քրիստոս»։ Անոր համար մեր անդադար մտածմունքը, խօսքը ու կենցաղավարութիւնը պէտք է ըլլայ մարմնացեալ Բանին հետ, մանաւանդ որ անոր Ողջակէզը ամէն օր Ս. Պատարագի մէջ կը վերանորոգենք։ Այսպէս Անոր հետն զբաղեցան միշտ Ս. Կոյսն ու Ս. Յովսէփ, այսպէս և Ս. Մագդաղենացի, Ս. Առաքեալք և առհասարակ ամէն Սուրբեր։ Իրենց միակ մտածումն էր Յիսուս, անոր հետ կը ներանձնանային նաև իրենց ամէն արտաքին զբաղումներուն մէջ ալ. զայն կը խորհէին, զայն կ'որոճային, անով կը զմայլէին։ Յիսուս մանուկը, Յիսուս սորվեցնողը, Յիսուս խաչեցեալը, Յիսուս սիրաբորբոք սրտով, ցանգ իրենց տենչանքն էր, հառաչանքն էր, սքանչացումն ու երանութիւնն էր։ «Թէպէտեւ ես մահու ստուերներուն մէջ ալ երթամ, չարէ բնաւ չպիտի վախնամ. որովհետեւ դուն, ո՛վ Տէր, իմ հետս ես»։ Ո՜հ, մեր մարմինն ու հոգին ալ թո՜ղ միշտ ինքը կառավարէ, ինչպէս իր սրբազան մարմինն ու գերերջանիկ հոգին։ «Ո՜վ երջանիկ մանկութիւն, որով մեր ցեղին կեանքը վերանորոգեցաւ. ո՜վ ցանկալի ու հեշտալի ճիշեր, որոնցմով զերծանք աստմանց կրճատումէն ու յաւիտենական լալիւնէն։ Ո՜վ բարեբաստիկ խանձարուրք, որոնցմով մեզաց աղտերը լուացինք։ Ո՜վ լուսափայլ մսուր, որուն մէջ ո՛չ միայն անասնոց խոտը դրուեցաւ, այլ հրեշտակաց Հացը գտնուեցաւ» (Ս. Օգոստ.)։—Այո՛, այս երկնաւոր Հացը մենք կրնանք ամէն օր ընդունիլ ի Ս. Հաղորդութեան, և աստուածային Մանուկն Յիսուս սեղմել մեր սրտերուն վրայ, սիրով զեղուած և զղջման արցունքներով։ «Անոր որ մսուրի մէջ տեսնելով (իր մայրն ու հայրագիրը և հովիւներ...) մեծաւ յարգութեամբ մօտեցան երկրպագելու, դու զնոյն ո՛չ ի մսրի այլ ի սեղանի տեսնելով, աւելի ևս եռանդ ու աստուածպաշտութիւն ցցուր» (Ս. Ոսկեբ.)։

11. Սակայն սա սուրբ խոկումները մեզի բնաւ օգտակար չեն կրնար ըլլալ, և այդ սէրը չի կրնար մշտատեւ յարատեւել եթէ Յիսուս մանուկէն պէտք եղած օրինակները չառնունք։ Քրիստոնէական կեանքը մի միայն գործնականին մէջ, առաքինութեանց կատարման մէջ կը կայանայ։ Քրիստոսի բարեկամն ու սիրելին ան է միայն որ անոր կը նմանի, որ անոր կամքը կը կատարէ, որ անոր պատուիրանները կը պահէ ճշդութեամբ և հաւատարմութեամբ. «Եթէ զիս կը սիրէք, ըսաւ, պահեցէ՛ք իմ պատուիրանները» (Յովհ. ԺԴ. 15, 21. ԺԵ. 10.) Եւ անոր պատուիրանները ծանր չեն. անոր լուծը քաղցր է և անոր բեռը թեթեւ. ինքը տուաւ օրինակը, ինքը պիտի տայ լոյսը, զնորհքը, ոյժը եւ յարատեւութիւնը։ Ինքը մեր ճամբան է, անոր հետքերէն չքալողը չի կրնար հասնիլ յաւիտենական երջանկութեան։ Ուրեմն, ի բաց թողլով անթիւ առաքինութիւնները, որոնց կենդանի օրինակը տուաւ մեզ Յիսուս մանուկ, խորհի՛նք միայն երեք գլխաւորները, որոնք մեզի ալ ամենակարեւոր են։

Ա. Յիսուս Մանուկ իր մուրին մէջէն, իրրեւ իր աստուածային Աթոռին վրայէն, նախ կը սորվեցնէ մեզ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ։ «Թէպէտեւ, կ'ըսէ Պօղոս Առաքեալ, ինքն Աստուծոյ Որդի է, այնպէս հնազանդ եղաւ իր Հօր, որ մինչեւ իսկ չարչարուեցաւ ու մեռաւ (Եբր. Ե. 8.)։ Ղրկեց Հայրն Աստուած իր Որդին յայդին, և նա եկաւ, գիտնալով որ զինքը պիտի սպաննեն (Մատթ. ԻԱ. 37-38), եւ հազիւ մնաւ յաշխարհ, ըսաւ՝ Ահաւասիկ կու գամ քու կամքդ կատարելու, ո՛վ Աստուած (Եբր. Ժ. 5. 9.), հնազանդ ըլլալով մահու չափ և մահու խաչի (Փիլ. Բ, 8)։ Հնազանդեցաւ իր ստեղծուածին՝ Աւգոստոս Կայսեր, հպարտ հրամանին, և իր տունը թողլով մինչեւ իսկ ծնանիլ յախոռի յանձն առաւ։ Եւ իր կեանքին մէջ միշտ հնազանդ եղաւ. «Եւ էր նոցա հնազանդ» (Ղուկ. Բ. 51)։ Եւ. փրկութեան հասնելու համար մեզի թէութիւն դրաւ հնազանդութիւնը. «Իրեն հնազանդողներուն յաւիտենից փրկութեան պատճառ եղաւ» (Եբր. Ե. 9)։ Քանզի հնազանդութիւնը երկրպագութիւն և ամենամեծ պաշտօն է Աստուծոյ և ամենաընդունելի զոհ մեր մտքին ու մեր կամքին, մեր հաճոյքին, մեր կարծիքին, մեր զգացման, մեր կրքերուն. հնազանդութիւնը Հաւատք է, Յոյս է, Սէր է. հնազանդութիւնը Համակամութիւն է, Խոնարհութիւն է. հնազանդութիւնը Պատուիրանապահութիւն է, Հաւատարմութիւն է, Խոստովանութիւն է։ Կաթողիկէին առաջին առաքինութիւնը Հնազանդութիւն է։ Մեր կաթողիկէ ըլլալը չնորհ մը չէ զոր կ'ընենք Աստուծոյ, քա՛ւ լիցի, այլ Աստուծոյ մեզի ըրած ամենամեծ չնորհն է, որոյ համար ո՛չ թէ պարծենալ, այլ միշտ և անդադար չնորհակալ ըլլալու ենք Աստուծոյ. որովհետեւ այս չնորհը հեռը կը բերէ կատարեալ աստուածածանութիւն, Քրիստոսի ամբողջական աշակերտութիւն, որով եւ աշխարհի վրայ երջանկութիւն և անսասան վստահութիւն փրկութեան. ո՜հ, որպիսի՜ գանձ։ Պէտք է ուրեմն դողանք, որովհետեւ մեր Աստուծոյ ու Եկեղեցւոյ անհնազանդութեամբը անոնց բան մը չի պակսիր, այլ մենք մեր անհնազանդ նախահայրն Ադամի պէս կը վոնտուինք Աստուծոյ Սրբավայրէն ու դժբախտ կ'ըլլանք. քանզի ով որ Քրիստոսի պաշտօնէից մտիկ չ'ըներ, Քրիստոսի մտիկ չըրած կը սեպուի (Ղուկ. Ժ. 16). անհնազանդը Քրիստոսի համար հեթանոս է և մաքսաւոր։ Ինքնահաւան անհնազանդները եղան հերետիկոս և հերձուածող. բողոքական և անկրօն։ Անհնազանդ և կրօնքը չգործադրող կաթողիկէն որքան ալ աղաղակէ՝ Տէ՛ր, Տէ՛ր, սակայն քրիստոս կը պատասխանէ իրեն. Չե՛մ ճանչնար զքեզ (Ղուկ. ԺԳ. 25—27), որովհետեւ ձեր պահոց օրերն անգամ ձեր կամքը միայն կատարած կ'ըլլաք (Եսայի ԽԸ. 3)։ Գերի պիտի ըլլայ մեր միտքը, ինչ որ ալ ըսէ մոլորեալ և անհնազանդ աշխարհ որ ի չարին կայ, գերի պիտի ըլլան մեր կամքը, մեր կարծիքը, սովորութիւնները, կիրքերը. մեր հնազանդութիւնն ալ պէտք է որ յայտնուի, «Գերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի. եւ ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ ամենայն անհնազանդութեան, յորժամ ձեր եւս հնազանդութիւնդ կատարեսցի» (Բ. Կոր. Ժ. 5. 6)։ Զկայ միջին ճամբայ։ Պէտք է ենթարկուինք «Ի հնազանդութիւն Յիսուսի Քրիստոսի, իբրեւ զորդիս հնազանդութեան, զանձինս ձեր սրբել հնազանդութեամբ» (Ա. Պետր. Ա. 2, 13, 22.)։ Հին քրիստոնեաները կը գովուէին որովհետեւ անոնց հնազանդութիւնը աշխարհ ամենայն յայտնի կը տեսնէր (Հռ. ԺԶ. 19.) «Փառաւորել զԱստուած ի վերայ հնազանդութեան ձերոյ» (Բ. Կոր. Թ. 13)։

«Հնազանդ եղէք ձեր առաջնորդներուն եւ հպատակ եղէք անոնց» (Եբր. ԺԳ. 17)։ Ահա Յիսուս Մանուկին մեզի սորվեցուցած առաքինութիւնը։ Նա Աստուած, հնազանդեցաւ մարդու, մենք՝ մեղաւոր ու թշուառական մարդեր, չպիտի՞ հնազանդինք Աստուծոյ և Անոր Փոխանորդացը. Նա կը հնազանդի անբարբառ, մենք՝ պատճառանքներո՞վ, պայմաններո՞վ, խոժոռ ու մրմռալո՞վ. Նա՝ խոնարհամիտ ու պատրաստակամ, մենք՝ յոխարտանօք ու պատճառաբանելո՞վ. Նա՝ արա՛գ արա՛գ, մենք՝ դանդաղ ու յակամա՞յ, խոստանալով

ու չկատարելով, հազար նեղութիւններ տալով. Նա՝ ամէն գնով, մինք՝ մեր հանգիստով, հաստուցմամբ փոխարէն. ժխտելով ամէն զոհողութիւն։ Իսկ Նա անպարտ էր եւ Տէր. մինք ծառայք անպիտանք, երբեմն, նաեւ ուխտիւ կաշկանդուած!... Ահա ուրեմն այդ մեծ Առաքինութիւնը զոր պիտի խորհի Քրիստոնեան մտուրին առջեւ ու պիտի գործադրէ իր ամբողջ կեանքին մէջ, և մահուան վայրկեանին ալ համակամութեամբ հնազանդելով Աստուծոյ կամաց, պիտի մտնէ յուրախութիւնն յաւիտենից. քանզի Յիսուս «Իր հնազանդեալներուն եղաւ պատճառ փրկութեան»։

Բ. Յիսուսի Քրիստոսի՝ իր մտուրէն սորվեցուցած գլխաւոր առաքինութիւններէն երկրորդն է ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ։ Քրիստոնէական կեանքի հիմն է այն. որչափ խորարմատ ըլլայ խոնարհութիւնը, այնչափ բարձր է եւ փառաւոր՝ աւետարանական կատարելութեան չէնքը։ Խոնարհութիւնը բացարձակապէս արդարութիւն է. քանզի մարդս իրմէն բնաւ բան մը չունի. ամէն բան Աստուծմէ առած է, գոյութիւն, հոգւոյ և մարմնոյ բնական կատարելութիւններ և աշխարհային ո եւ է գոյք. նոյնպէս գերբնական հաւատք և շնորհք. ինքիրմէն ոչինչ է մարդը, եւ աւելի քան ոչինչ, քանզի մեղաւոր է։ Ուստի բնաւ չի կրնար պարծիլ (Ա. Կոր. Դ. 7)։ Ուստի խոնարհիլը, Աստուծոյ առջեւ ոչնչանալը՝ մարդուս պարտքն է և Աստուծոյ անբնաբառելի իրաւունքը։ Իսկ Տէրն մեր Յիսուս իր անհուն գթութեամբը խոնարհութեան ապշեցուցիչ օրինակներ տուաւ մեզի, որպէս զի խրախուսուինք ու իր եաեւէն քալենք մենք ալ քաջութեամբ, մեր սրտերուն մէջ մեր բոլոր հոգեկան կարողութեան մէջ անիծեալ արմատներով հաստատուած հպարտութիւնը, մեծամտութիւնը, պարծենկոտութիւնը, նախանձը, բարկութիւնը արմատաքի խլելով, ինչպէս որ ըրին բոլոր Սուրբերը։

Ինքը՝ Որդի Աստուծոյ ըլլալով, ի կերպարանս Աստուծոյ և հաւասար Աստուծոյ ըլլալով, «խոնարհեցուց իր անձը», ինքզինքը ունայնացուց, կ'ըսէ Առաքեալը. ինչո՞վ. մարմնանալով, իր ծառային կերպարանքը առնելով։ «Զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ» (Փիլ. Բ.)։ Անստեղծ Իմաստութիւն Հօր մարդ եղաւ ու ախոռի մը մէջ ծնաւ, մսուրի մը մէջ դրուեցաւ. ոչ ոք գիտցաւ զինքը, և երեսուն տարի Նազարէթի մէջ անծանօթ ապրեցաւ յետին խոնարհութեամբ։ Իսկ իր հրապակական կենաց խոնարհութիւնները մեր միտքը կը սասանեցնեն. մանաւանդ իր կեանքին վախճանը, այն վերջին օրուան խոնարհութիւնը, ահաւոր տեսարան մըն է։ Զմեռաց արհամարհանք մը, ցաւ մը, վէրք մը, դառնութիւն մը, որ հեղեղի պէս չվազէր իր վրայ. մարդիկներու ամէնէն անարգը եղաւ, գետնի որդը, լքուեցաւ միայնակ. «Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ». և ամբողջ վէրքերով ծածկուած, խաչի վրայէն երեք գամերով սարսռացող մարմինը կախուած երեք ժամ անպատմելի տագնապներէն վերջը, խոնարհն Յիսուս «խոնարհեցնելով իր գլուխը աւանդեց հոգին» (Յովհ. ԺԹ. 31)։ Ահա՛ օրինակը։ Մանուկ Յիսուս կը գոչէ ձեզի մսուրէն. «Սորվեցէ՛ք ինձմէ որ խոնարհ ու հեզ եմ սրտով» և Հիմէ սորվիք ինձմէ հեզութիւնն ու խոնարհութիւնը, ան ատեն միայն «Հանգիստ ու խաղաղութիւն պիտի գտնէք» (Մատթ. ԺԱ. 29) Քանզի «Բարի է մարդոյ առնուլ զլուծ խոնարհութեան» (Ողբ. Գ. 27). եւ այս լուծը որ իմն է, քաղցր է։ Զի ես խոնարհները կը բարձրացնեմ ու խոնարհներու կու տամ շնորհք (Ղուկ. Ա. 52. Հմմ. Սղմ. ՃԺԲ. 6.—Առ. ԻԹ. 23.—Ա. Պետր. Ե. 5)։ Նոյն իսկ իմ մայրս սիրեցի՝ իր անբաւ խոնարհութեան համար «Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ» (Ղուկ. Ա. 48)։ Ուստի խոնարհեցարուք իմ հզօր ձեռքիս ներքեւ, որպէս զի ի ժամանակին ես զձեզ բարձրացնեմ (Ա. Պետր. Ե. 6). խոնարհ եղէք նաև իրարու հետ, և ձեզմէ ամէն մէկը իր ընկերն իրմէն աւելի լաւ համարի (Անդ. 5.—Փիլ. Բ. 3)։ «Մի այր զանգ զընկեր հպարտանայցէք ի վերայ ընկերին»

(Ա. Կոր. Դ. 6)։ «Փորձ՝ ի քեզ խոնարհութեան հիմք. եւ այնպէս պիտի հասնիս ի կատարն սիրոյ» (Ս. Օգ.)

Դ. Նորածին Յիսուս Մանուկին մեկի սորվեցուցած երրորդ գլխաւոր առաքինութիւնն է՝ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ։ Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Գիտէք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը. որովհետեւ անիկա որ մեծատուն էր՝ ձեզի համար աղքատացաւ» (Բ. Կոր. Ը. 9)։ Հայրագիրը և իր մայրը ամենէն աղքատ դասակարգէն. ահա «Կ'աղաղակէ ախոռը, կ'աղաղակէ մսուրը, կ'աղաղակեն արցունքները, կ'աղաղակեն խանձարուրքը» (Ս. Բեռն).. ամենայն ինչ կ'աղաղակէ անունսն աղքատութիւն «Իրենցերուն եկաւ, ու իրենցերը զինքը չընդունեցին» (Յովհ. Ա. 11)։ Նա չունի բան մը, ո՛չ բնակարան, ո՛չ կերակուր, ո՛չ զգեստ, ո՛չ անհրաժեշտ պիտոյք։ Ինքը ըսաւ. «Երանի՛ աղքատաց» (Մատթ. Ե. 3)։ Առաջին երանութիւն։ Ո՜հ, գանձ է ուրեմն աղքատութիւնը, երկնից Թագաւորին և Աստուածամօր սիրելագոյն առաքինութիւնը եւ կատարելութեան միակ ճամբան (Մատթ. ԺԹ. 21)։ Իսկ ահաւոր փորձութիւն է հարստութիւնը, իր դիւրութիւններով, պերճանքով, համադամ խորտիկներով, զուարճութիւններով ու անյագ զեղխութեամբք ու ցանկութիւններով։ Ի՜նչ գայթակղութիւններ, ի՜նչ անիրաւութիւններ, ի՜նչ ոճիրներ։ Ի՜նչ ահաւոր ունայնութիւն, եւ որդերու պատրաստութիւն։ Դադար կը սպասէ և գերեզման։ Ագահը կը տուայտի՝ ատ և ի հանդերձելումն. ագահը կուապաշտ է (Կոլ. Դ. 5)։ Մրչափ քիչ բան պէտք է այս անցաւոր կեանքի մէջ. և զայն Աստուած պիտի հոգայ անշուշտ (Մատթ. Զ. 19-21.—24-34)։ Մի՛ փափաքիր այն բանին զոր Քրիստոս արքայութիւն մտնելու համար ամենամեծ արգելք կոչեց։ «Ամեն ասեմ ձեզ զի դժուարաւ մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից» (Մատթ. ԺԹ. 23)։ Օրհնեա՛լ աղքատութիւն, որ ամէն փափաք մեռցնելով ի մեզ, ճշմարտապէս երջանիկ կ'ընէ, քանզի բուն երջանկութիւնը՝ կարծուած երջանկութիւնը արհամարհելն է։ Օրհնեա՛լ ճշմարիտ աղքատութիւն, բնական կերպով կը ծնուցանէ ամենամեծ առաքինութիւնները. Համակամութիւն Աստուծոյ հրամանաց. Խոնարհութիւն, Հեզութիւն, Հնազանդութիւն, Համբերութիւն. Քրիստոսի խաչակից նմանութիւն, արհամարհանօք, լքումով և հալածանօք հանդերձ. Աղօթասիրութիւն, Զանձրոյթ աշխարհէս և փափաք արքայութեան։ Աղքատութիւնը իրաւամբ արժանի եղաւ սիրելի ըլլալու Սուրբ Ընտանիքին. գանձ անպակաս յերկինս։ Աղքատութիւնը՝ ըլլա՛յ իրական՝ ըլլա՛յ փարթամութեան մէջ իսկ հոգւով ստացուած, այսինքն՝ մահացուցումով, ողորմածութեամբ, սակաւապիտութեամբ, յամենայն դէպս աղքատութիւնը կը թեթեւցնէ զհոգի, մանաւանդ ի կէտ մահու. դէպ ի երկինք սլանալու համար։ «Նրանի՛ աղքատաց հոգւով»։ Ահա այս է փառաւոր հատուցումը, զոր Տէր կ'ընէ իր ծառայից աղքատութեան։ «Օրհնեցէ՛ք, ո՛վ մանուկներ, օրհնեցէ՛ք Տէրը եւ Տիրոջ անունը։ Տիրոջ անունը օրհնեալ ըլլայ, ասկից վերջը մինչեւ յաւիտեան։ Արեւելքէն մինչեւ արեւմուտք օրհնուած է Տիրոջ անունը։.. Ո՞վ է մեր Տէրը Աստուծոյ նման, որ բարձրերը կը բնակի, ու խոնարհները կը տեսնէ երկինքէն ու երկրիս վրայ։ Կը վերցնէ աղքատները հողէն. եւ տառապողները կը կանգնէ աղբիւսներէն։ Զանոնք իբրեւ իշխան կը նստեցնէ՝ իր ժողովրդեան իշխաններուն հետը» (Սղմ. ՃԺԲ.)։

12. Վերջացնելէ առաջ, ո՛վ հաւատացեալ հոգի, խորհինք որ մեզի այսքան բարիք պարգեւեցաւ Ս. Կուսին ձեռօք։ «Ո՞վ արժանապէս պիտի կարենայ գովել զքեզ, ո՛վ Աստուածամայր Մարիամ, որ սքանչելի հաւանութեամբդ փրկեցիր աշխարհքը, որ կորսուած էր. Մարդս տկար ինչպէս պիտի կարենայ մեծարել զքեզ պատշաճապէս, որ քու միջնորդութեամբդ միայն գտաւ փրկութեան ճամբուն մուտքը» (Ս. Օգ.)։ Մարիամ մայր մըն է, բայց Աստուածամայր և կոյս. Մարիամ խոնարհ աղախին մըն է, աղքատ և կարօտ, բայց Թագուհի երկնի եւ երկրի։ Յիսուս Մանուկը, աշխարհիս ու արքայութեան այս անգին գանձը, Մարիամու

ստացուածն է, զի անոր որդին է. անոր զբրակայը մէջ է, անոր կաթողը կը մնանի, անոր իշխանութեան ներքեւ է։ «Կոյսն առանց ցաւոց ծնանելով յայրին, երկնից ու երկրի Տէրը դրաւ մսուրի մէջ. ան աստեղ հրեշտակաց դասերը Կոյսին քով կ'աղաղակէին ու կ'ըսէին. Փառք ի բարձունս Աստուծոյ» (Ս. Եպիփ.)։ Առաջին անգամ Մարիամ երկրպագեց մարդացեալ Բանին Աստուծոյ, բոլորովին խորասուզուած անոր զմայլմանը մէջ, և գոչելով. «Ցանկալի՛դ իմ, եկար հասար, Աստուա՛ծ իմ, Տէր իմ և որդի իմ»։ Եւ անոր ոտքերը համբուրեց իբր իր Աստուծոյն, ձեռքերը համբուրեց իբրև իր Տիրոջը, երեսը համբուրեց իբրեւ իր սիրելի զաւակին. և զայն իր կրծոց վրայ սեղմեց եւ բաղկօք փարեցաւ անոր։ Կոյսն աստուածութեամբ համակուած էր բոլորովին ու թափանցուած, ինչպէս մոմենին, որ կ'այրէր անկէց։ Ինքն իր որդին՝ ինչպէս վարդը կը բուրէ իւր քաղցր հոտը։ Ս. Կոյսը առ Սրբուհին Պրիճիտա իր ըրած յայտնութեանց մէջ (Գիրք Ը.) ըսած է անոր. «Ինքնայ զՅիսուս երբ ծնրադրած էի ու կ'աղօթէի միայնակ յայրին։ Քանզի ծնայ զԱնիկայ այնքան ցընծութեամբ և ուրախութեամբ սրտի, որ չը զգացի ինքն ծանրութիւն մը կամ ցաւ մը. այլ շուտով զինքը փաթթեցի մաքուր լաթերով, զորոնք առաջուց պատրաստած էի։ Այս ամէնը երբ մտաւ ու տեսաւ Յովսէփ, ապշահար մնաց մեծ ուրախութեամբ ու խընդութեամբ. անոր համար որ առանց օգնականութեան մը ծնդրադրեր էի»։ — Մարիամ միայն առանց ապականութեան յղացաւ, առանց նեղութեան տարաւ յարգանդի. առաց ցաւոց ծնաւ զՈրդին» (Ս. Բեռն.)։ Բնական մայր ըլլալով, Աստուածամայր եղաւ. և աւելի մայր եղաւ քան ուրիշ մայրեր, զի Քրիստոս ամբողջովին անկէ առաւ իր մարդկային բնութիւնը. որով և սէրն Քրիստոսի անբաժան մնաց միայն իր մօրը վրայ։ Եւ Քրիստոս անցաւ ընդ մայրն առանց վնասելու անոր կուսութեան, ինչպէս յետ յարութեան մտաւ դրօյն փակելով. անցաւ ինչպէս լոյսը կ'անցնի բիւրեղէն (Ս. Բարսեղ)։ Հետեւարար Մարիամ է մեր Տիրոջ տիրուհին, ստացողը, իշխանուհին. առանց Մարիամու չ'երթցուիր առ Յիսուս։ Իր ճշմարիտ երկրպագուները անոր կուսական ու մայրական անարատ ձեռքերէն ընդունեցին միշտ զՅիսուս։ Ուրեմն մենք որ խեղճ ենք, աղքատ և հիւանդ, և անթիւ թշնամիներով ու կիրքերով պաշարուած, դիմենք առ Մարիամ, ինչպէս մեր մօրը։ Լսուած բան չէ ի յաւիտենից որ Մարիամ մերժած ըլլայ իրեն եկողը, իրեն թախանձողը, իրեն յարատեւ ջերմեռանդը։ Անհնարին է որ Աստուածածին մօր ճշմարիտ որդի մը յաւիտեան կորսուի։ Մեր տկար մտքերուն համար անիմանալի է անոր զօրութիւնը։ Ս. Աւետարանը միակ դէպք մը կը պատմէ, բայց սասանեցուցիչ։ Մարիամ Աստուծոյ հրամայեց, Մարիամ Աստուծոյ վճիռը բեկանեց։ Աստուած ժամանակ որոշած էր Քրիստոսի հրաշք ընելու սկսելուն. Մարիամ փոխեց այս որոշումը։ Ըսաւ իր Զաւակին. «Ատոնք գինի չունին»։ Ըսել կ'ուզէր՝ Հրաշք մը գործէ՛։ Ծանրութեամբ պատասխանեց Աստուածորդին. «Դեռ ժամանակս եկած չէ». ժխտեց ուրեմն։ Թո՛ղ զարհուրին արարածք. Մարիամ և ոչ իսկ աղաչեց. ծառաներուն հրամայեց՝ «ինչ որ ըսելու ըլլայ ձեզի ըրէ՛ք»։ Կարուկ հրաման Աստուածամօր մը։ Եւ՝ Աստուած հնազանդեցաւ։

Ես ալ կը հնազանդիմ քեզ, ով Մայր, թշուառականս և ոչինչս. կ'երկրպագեմ քեզ ո՛վ Տիրուհի Աստուածամայր. ինչ վստահութիւն որ ունէիր քու Որդւոյդ վրայ, տո՛ւր ինծի այն վստահութիւնը դէպ առ քեզ, ո՛վ Մայր. մեղաւոր եմ անոնման, տկար եմ եղեգի պէս. ո՛վ Մայր, ոտքերուդ առջեւ կ'իյնամ, լալով ու ողբալով. գթած աչքերդ դարձո՛ւր ինծի ոտքերուդ կը փարիմ, ո՛վ Մայր, տ ւր ինծի. Յիսուսը, իմ Փրկիչս, իմ Սէրս, իմ Տէրս, իմ Աստուածս, իմ Թագաւորս. քու անարատ ձեռքերէդ առնում զինքը Ս. Հաղորդութեան մէջ հիմա եւ մահուանս ատեն։ Ո՛վ Մայր, ըրէ՛ որ քաւէ նա իմ մեղքերս, զօրացնէ զիս առաքինութեան ճամբուն մէջ. ըրէ՛, ո՛վ Մայր, որ զինքը և զքեզ մինչեւ վերջին շունչս սիրեմ, և ապա

գամ վայելեմ ձեր երանական տեսքը յանվախճան յաւիտեանս։

«Ո՛վ սքանչելի Լուսոյն անարաս Մայր, որ յաւիտենական Աստուածը քու արգանդիդ մէջ կրեցիր, ու ծնար զԲանն Աստուած յուրախութիւն աշխարհի. կ՚աղաչենք,

Ո՛վ Մայր, բարեխօսք՝։

«Աղաչէ՛ մեզի համար քեզմէ մարմնացող Աստուծոյ, որ իր Հօր ծոցեն խոնարհեցաւ, մեր մարդկային բնութեան նման մարմին առաւ, երկինքի ու երկրի մէջ խաղաղութիւն հաստատելու համար. կ՚աղաչենք։

Ո՛վ Մայր, բարեխօսք՝.

«Աղաչէ՛ մեզի համար քեզմէ մարմնացող Աստուծոյ, որպէս զի նորէ մեզի, անտես ընէ մեր յանցանքները, եւ օգնէ մեզի որ կարող ըլլանք հոգեւոր պատերազմի մէջ մեր թշնամիներուն զօրաւոր կերպով դիմադրել. կ՚աղաչենք,

Ո՛վ Մայր, բարեխօսք՝ առ Տէր մեզի համար»։

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ,

ԾՆՈՒՆԴԸ

Ցուրտ յարաճուն՝ գիշեր մ՚էր սրթին.
Սառ ու ձիւն համակ ծածկած ամէն դին.
Եւ արդէն վաղուց ասպեր ամօթված
Լուրթ ամպոց ներքեւ էին պսեւրած։

Չէր լրսուեր ուրեմ ոչ ճիչ մը բարակ,
Բացի տրտունջէն բուին մահնէրգակ.
Ամէն ոք ի քուն կ՚երազէր մեծ մեծ.
Պատիւ ու հանոյք, փառքեր սին ու կեղծ։

Քիչ անգին յանկարծ ծագեց գիսաւոր
Ասպրդ անենման, ասպրդ փառաւոր,
Որու նառազայթն անուշ երինեւանգ,
Սրտիւէր դիտողին նոր հոգի, նոր կեանք։

Անա այս պահուս հրեշակներ հուրի
Ձրգրիս տիպարներ թոյրի եւ բոյրի,
Կը պարէին զոյգ զոյգ եւ հոլաթեւ
Հեռուն մոռցուած բարայրին վերեւ։

Անդադար հեշտիւ եւ երնոռհատաւ
Մրմնջէին փառք բարձանց ալեու.
Եւ այս ջօներգին սիրահրաւէր
Տային արձագանգ անմեղ հովիւներ։

Նորածին մը գիրգ եւ չքնաղագեղ
Հին ու քայքայուն մսուրին մէջտեղ
Բազմած կը հանգչէր միշտ խոնարհ ու ձեզ,
Տաճարի անմեղ պատրուճակի պէս։

Ողջո՛յն ձեզ ասպեր, ողջո՛յն քեզ աշխարհ.
Աղէ՛, կեանք տուէ՛ք, ժպտեցէ՛ք երկար.
Զի Ցիսուս Մանուկ ծրնաւ ձեզ այսօր
Երկնի ու երկրի միակ թագաւոր։

Հ. ԳԱՅՄԱԳԵԱՆ
Աշակերտ Ցիսուսեանց վարժարանի
Ամասիա

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Դեկտեմբեր 24ին Ս. Ժողովին Վեհափառ Կարդինալները ծննդեան առթիւ Գրենց շնորհաւորութիւնը մատուցի Ս. Քահանայապետին։ Ս. Ժողովին Կարգերէց Վեհ. Սէրաֆինօ Վանութէլլի կարդինալը հակիրճ խօսքերով յիշեց վերջին ոգալի եղելութիւնները, որոնք Վիվէս, Օրէլիա և Ռամբոլլա կարդինալներուն մահուամբ եկեղեցին ընդունեցին։ Վեհ. Միրանտու
ը՝ ցաւակցութիւններ յայտնելէ յետոյ, մատոյց Ս. Հօր իր և իր Վ. Վ. Ընկերներուն բարեմաղթութիւնները։ Պիոս Ժ. սիրալիր կերպով շնորհակալ եղաւ իրեն եղած բարեմաղթութեանց համար և յուզեալ շեշտերով պատասխանեց ցաւակցական արտայայտութիւններուն՝ յատկապէս հանգուցեալ Ռամբոլլայի մասին։

*** Վերջերս մեռաւ Շատանդ-Էնֆէռիէսօի երեսփոխանը, Մ. Գամիլ Նէքոլ, և թաղուեցաւ Թէսոնի մէջ՝ առանց եկեղեցական արարողութեան. որովհետեւ այդ երեսփոխանին բաժանման օրէնքը քուէարկած ըլլալուն համար Ռոշէլի արքեպիսկոպոսը թոյլ չէ տուաւ որ կղերականները թաղման մասնակցին։ Ռոշէլի արքեպիսկոպոսին այս ընթացքը երբէք զարմանք չի պատճառեր, որովհետեւ համաձայն է եկեղեցւոյ կանոնական որոշումներուն։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ.— Դեկտ. 27ին Ս. Ստեփանոսի տօնին օրը, Ա. Ցղուլեան Կարգին Մայր-Վանքին մատրան մէջ պատարագեց նոր Կարգին գործակատար Գերարգելի Յովհաննէս Ծ. Վ. Թումայեան, բարեյիշատակ Ազարեան Ստեփանոս Պետրոս Ժ. Կ. Պատրիարքին հոգեւոր համար։ Պատարագէն վերջը հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ։ Ներկայ էին Ամենապատիւ Գերերջանիկ հոգեւոր Տէրը, և Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան Կ. Պատրիարքական Փոխանորդը, որոնք յետոյ աւանդաւորեցան հիւրընկալութեան սրահ։ Աջահամբոյրի արարողութենէն վերջը Ն. Գերերջանկութիւնը հայրաբար Ս. Տօները շնորհաւորեց և քաջալերական խօսքեր ուղղեց Ա. Ա. Քոյրերուն։

Մայր վանատուն Ն. Գերերջանկութիւնը ընկերակցութեամբ Արհի. Փոխանորդ Գերապայծառին գնաց այցելութիւն տուաւ Որբանոցին. հոն ալխատող անձնանուէր Քոյրերն ու պատապարուող որբուհիներն ալ ուրախացուց իր շնորհաւորական և սրտապնդիչ խօսքերով։ Որբուհի իր յանուն իր քոյրերուն ուղղեց Ն. Ամենապատուութեան բարեմաղթական ուղերձ մը, որուն Հոգեւոր Տէրը յուզուած սրտով պատասխանելով օրհնեց զամէնքը։

*** Դեկտ. 29ին Գլխաւոր Առաքելոց Պօղոսի և Պետրոսի տօնին օրը, Ամեն. Հոգեւոր Տիրոջ անուան տարեդարձը կատարուեցաւ Կաթողիկոսարանի սրահին մէջ։ Շնորհաւորութեան եկան Սեաղ Թէմի Գ. Գ. Վարդապետներէն զատ Վենետիկի և Վիեննայի

մխիթարեանց Պոլսոյ դպրոցներուն վարիչ Վ. Վ. Հայրերը, Վ. Վ. Անտոնեան Միսրանները. լատին կրօնաւորական կարգելու ներկայացուցիչները, և աղգային և օտարազգի բարձրաստիճան անձնաւորութիւններ։

*** Դեկտ. 31ին Ա. Յղութեան Քերց Որբանոցին մէջ ընտանեկան գեղեցիկ հանդէս մը տեղի ունեցաւ առթիւ անուան տարեդարձին Մեծ. Բոյր Աղաւնիին, որ հակառակ իր բազմամեայ հասակին և 50 տարուան անձնանուէր և աշխատասէր գործունեայ կեանքին ձեռնհասորէն կը վարէ հիմայ նոյն Որբանոցին Մեծաւորուհիի պաշտօնը։

ՆԵՐՔԻՆ ԴՈՐԾԵՐ.— Բարենորոգմանց խնդրոյն վրայ քաղաքական շրջանակներուն մէջ տիրող կարծիքն այն է թէ Բ. Դրան հետ բանակցութիւնները շատ առաջ գացած են։ Յանուն Երբեակ Համաձայնութեան բանագնացն է ռուս դեսպանը. իսկ Երբեակ զինակցութեան բանագնացն է գերման դեսպանը։ Հիմայ բանակցութիւնները կը դառնան հետևեալ կէտերուն վրայ։

Ա.— Օսմ. կառավարութիւնն ընդհ. կառավարիչ մը (Վալիի ումումի) պիտի կարգէ Արեւելեան նահանգներուն համար, և անոր քով պիտի գտնուին երկու օտար խորհրդական, մին կարգուած Երբեակ Զինակցութեան կողմէ, իսկ միւսը՝ Երբեակ Համաձայնութեան կողմէ։

Բ.— Ընդհանուր կառավարիչին ու օտար խորհրդականներուն միջեւ անհամաձայնութիւն ծագած պարագային, անիկա պիտի լուծուի մեծ տերութեանց դեսպաններուն և Բ. Դրան միջեւ։

Գ.— Միակ նահանգ պիտի կազմեն Արեւելեան վեց նահանգները, որ պիտի ունենան նահանգային միակ ընդհանուր ժողով մը, անդամներուն կէսը քրիստոնեայ և կէսն իսլամ, որ պիտի ընտրուին ժողովուրդին կողմէ։ Ժողովը պիտի գումարուի տարին երկու անգամ։

*** Բարիզ Դեկտ 30.— Լոնտոնէն եկած տեղեկութեան մը համաձայն օսմ. կառավարութիւնը 1.200 000 ոսկի տուած է իբր կանխավճար, գնելու համար Ռիո տր Եանէյրо Տրէտնոթիր որ շինուած է անգլիական նաւաշինարանին մէջ ի հաշիւ Պրազիլիոյ կառավարութեան։ Նաւուն գինն մնացեալ 2.340,000 ոսկին պիտի վճարուի առաջիկայ ամիսներուն։ Օսմ. կառավարութիւնը ասկէ զատ 20,000 ոսկիի ռազմամթերք գնած է։

*** Մարդահամարի գործողութիւններն ե. բարեկան կատարելութեամբ ի գործ դնելու համար մարդահամարի ճիւղին տնօրէն պիտի կարգուի Մ. Մսիէ որ մնացեր պիտի դայ. իսկ այժմու ընդհանուր տնօրէն Բէմզի պէյ անոր օգնական պիտի կարգուի։

*** Պատերազմական նախարարութիւնը ծանոյց կ. Պոլսոյ կեդր. հրամատարին թէ 306էն մինչև 309ի ծնածներէն նեցուկ չունեցող (մուինիպ) բոլոր զինուորները պէտք է զէնքի տակ կոչուին։

*** Թուրք անկախութեան տարեդարձը Դեկտ. 30ին տօնուեցաւ մեծ շքով։ Համալսարանին բոլոր սանողութիւնը, ինչպէս նաև բարձրագոյն վարժարաններու աշակերտները առտուն կանուխ հաւաքուեցան Համալսարանին մեծ սրահին մէջ և խոշոր դրօշներով, որոնց վրայ վերտառութիւններ կային, և նուագախումբերով գացին նախ և առաջ պատերազմական պաշտօնատունը, ուր զիրենք ընդունեց նախարար Իզզէթ փաշա և շնորհակալութիւն յայտնեց յանուն բանակին և ըսաւ.— « Դուք գրիչով, իսկ մենք սուրով միշտ պիտի պաշտպանենք այս հայրենիքը։ Կեցցէ՛ հայրենիքը, կեցցէ՛ օսմ. անկախութիւնը, կեցցէ՛ երիտասարդութիւնը»։ Թափօրը յետոյ ուղղուեցաւ կրթական պաշտօնատունը, և անկէ Քաղաքապետարան։ Բ. Դրան առջեւ Թալէաթ պէյ ընդունեց թափօրը և յանուն Եպարքոսին շնորհաւորեց երիտասարդութիւնը՝ իր հայրենասիրական ցոյցին համար։ Թափօրը յետոյ գնաց Տոլմա Պաղչէի պալատը, Բերայի ճամբով, և Նէճմէթ պէյ ճառ մը արտասանեց, զոր Կայսրը լսեց պատուհանէն ու ծափահարեց, իր գոհունակութիւնը յայտնելով այս հայրենասիրական հանդէսին համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	1
Նամակ առ Ամեն. Հոգեւոր Տէր	5
Հիւսնի ինքիսապ	6
Եօթնեակ Քրիստոնէի	8
Մեկնութիւն Ս. Աւետարանի	9
Մնուանդը	15
Տեղեկագրական	15

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ՔԷՐՉԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շաբաթաթերթի, Բերա. Պաւրամ փասոզ ոհւ 5. Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դրկ. արծ. վեցամսեայ՝ 20.— Մէկ թիւ՝ 1 դրկ.։—Արտասահման՝ տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են։

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK
Péra, 5 Rue Baïram 5
Constantinople

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը։ 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո և է յօդուած։ 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին։ 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր։ 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն։ 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին։ 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին ղրկել։

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դրկն.։
Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 գրկն.։

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5։ Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար։ Կը տպուին ամեն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարտ-ատրէաներ. մահազդներ, եւն. եւն.։ Գիները անմրցելի կերպով ածան են։ Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական ժաքրութեան կողմէ յանձնարարդները անտարակոյս գոհ պիտի ըլլան.

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE :

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapeste, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemysl, Salsburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

SUCCURSALES EN TURQUIE :

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Pêra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.
Avances sur Marchandises.
Achat et vente de change sur l'Etranger.
Escompte d'effets de commerce.
Emission de chèques, et de lettres de crédit.
Ordonnancements telégraphiques sur la Turquie et l'Etranger.
Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.
Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.
Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accreditifs simples et documentaires.
Exécution d'ordres de Bourse.
Garde de valeurs publiques etc. etc.
Caisse d'Epargne.
Locations de coffre-fort.